«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ: ՆՐԱՆՑ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՓԱԿԱՆ ՓՈՐՁԻՑ

ԱՌԱՐԿԱ՝ ԴԱՍՎԱՐ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԿԱՐԻՆԵ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ ՍԵՎԱՆԻ Վ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ.....5
ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԱԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ.....6
ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ.....7
ՑԵՐԵԿՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԵՍՆԵՐ.....14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....17
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ.....18
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Տարրական դասարաններում ուսուցումն արդյունավետ կազմակերպելու, սովորողների լիարժեք սոցիալականացմանը և զարգացմանը նպաստելու համար անչափ կարևորվում են արտադասարանային աշխատանքները: Ի տարբերություն միջին և ավագ դասարանների՝ տարրական դասարաններում արտադասարանային աշխատանքների կազմակերպման առանձնահատկությունն այն է, որ այն մեծամասամբ ուսուցիչն է իրականացնում՝ ելնելով իր տարիքային, անհատական, մանկավարժական փորձից:

Արտադասարանային աշխատանքների կազմակերպման էական նշանակությունն այն է, որ դրանք լրացնում են հիմնական դասընթացին, խթանում երեխայի միտքը, նպաստում ստեղծագործականության, երևակայության զարգացմանը, ինչպես նաև սովորողների ինքնուրույնության դրսևորման լավագույն միջոց են հանդիսանում:

<u>Հետազոտության արդիականությունը</u>

Մարդու, անհատի ձևավորման մտավոր զարգացման և հետագա ողջ կենսագործունեության հիմքերը դրվում են դեռ վաղ տարիքից, ուստի շատ կարևոր է տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանությունը:Սա միակ ուղին է, որ տանում է ուսումնադաստիարակչական գործընթացի, երեխաների գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, ազգային ու համամարդկային արժեքների ձևավորման գաղափարի վրա:

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրության դաստիրակությունը մեծապես պայմանավորված է կարդալու կարողության ձևավորմամբ և հանդիսանում է արդիական խնդիր;

<u>Հետազոտության նպատակը</u>

Սույն աշխատանքում հիմնական նպատակս է եղել պարզաբանել, թե ինչ կարևոր նշանակություն ունի արտադասարանային ընթերցանությունը տարական դասարաններում;

1. Հիմնական նպատակներից է կոտրել այն կարծիքը թե ներկա սերունդը կարդալ չի սիրում, հեռու է գրքից:
2. Բացառել, որ աշակերտները չունեն հետաքրքրություն և սեր դեպի գիրքը:
3. Երեխաների մեջ մշակել ու զարգացնել կարդալու տեսնիկան՝ իր որակական բոլոր հատկանիշներով;
4. Կարևորել երեխաների մտավոր զարգացումը;

<u>Հետազոտության խնդիրները</u>

1. Հիմնական խնդիրներից է սաներին սովորեցնել սիրել գիրքը, օգտվել գրքից, անընդհատ նոր գիտելիքներ քաղել այնտեղից:
2. Զարգացնել երեխաների իմացական գործընթացը, ինքնակրթվելը, աճելը, ինքնաբացահայտվելը:
3. Աշակերտները գործնական կերպով կարողանան սովորել մայրենի լեզուն՝ ընթերցանության միջոցով հարստացնեն իրենց բառապաշարը:

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

Յուրաքանչյուր առարկայի ծրագիր չի կարող երբեք իր մեջ ընդգրկել այն բոլոր գիտելիքներն ու հասկացությունները, որ երեխան պետք է ստանա այդ ուսումնական առարկայից: Ծրագրում տրվածը միայն այն ամենահիմնականն է, որը անհրաժեշտ է տվյալ առարկայից ընդհանուր գաղափար տալու համար, իսկ մնացածը աշակերտներն իրենք պետք է ինքնուրույն ստանան շրջապատից և գրքերից: Դպրոցներում ամեն բան սովորեցնել ո՛չ կարելի է, ո՛չ էլ հնարավոր է: Մի բան պետք է թողնել աշակերտին, որ նա, առանց ուրիշի օգնության, անձամբ ձեռք բերի:

Այս առումով արտադասարանային աշխատանքները հատուկ արժեք են ստանում՝ որպես ինքնուրույն գիտելիքների ձեռքբերման և հատկապես խոսքի մշակման ու կատարելագործման միջոց: Արտադասարանային աշխատանքը դասարանում կատարված աշխատանքի օրգանական շարունակությունն ու լրացումն է, միայն այն տարբերությամբ, որ տնային աշխատանքը ծրագրային նյութերի շուրջ է տարվում, որպես դասարանում անցածի ամրապնդում ու վարժեցում, իսկ արտադասարանային աշխատանքը կատարվում է ծրագրային նյութերից դուրս, որպես լրացուցիչ տեղեկությունների հաղորդման կամ սովորած գիտելիքների ինքնուրույն գործադրման միջոց:

Արտադասարանային աշխատանքը, իհարկե, իր նպատակներով ու խնդիրներով կապված է դասարանային աշխատանքների հետ, նպաստում է ծրագրային նյութերի լավ յուրացմանն ու ամրապնդմանը, սակայն հաղորդած գիտելիքների ընդգրկման տեսակետից նրա ոլորտներից դուրս է գալիս, բոլորովին նոր տեղեկություններ է հաղորդում:

Այս նոր տեղեկություններն ու հասկացություններն, որոնք տրվում են սրտադասարանային աշխատանքի միջոցով, երեխան ձեռք է բերում ինքնուրույն' իր մեջ արդեն մշակված կարողությունների ու հմտությունների կամ դասարանում ստացած նախնական տեղեկությունների ու կողմնորոշող առաջադրանքների շնորհիվ:

Այստեղ առաջ է գալիս ֆորմալ կրթությունը և կարիք է առաջանում, որ աշակերտը մշտապես գտնվի ուշադրության կենտրոնում, որպեսզի ստանա միայն իր տարիքին համապատասխան տեղեկատվություն: Այս առումով դասարանում կատարվածը արտադասարանային աշխատանքի համար հիմք և բանալի է հանդիսանում: Հետևաբար, այդ երկու աշխատանքները փոխադարձորեն կապված են միմյանց հետ, լրացնում ու ամբողջացնում են միմյանց և մեկը չի կարող պատկերացվել առանց մյուսի: Արտադասարանային աշխատանքը մայրենի տարրական դասընթացի և առանձնապես նրա ընթերցանության բաժնի կարևոր բաղադրամասերից մեկն է, առանց նրա չի կարելի պատկերացնել աշակերտների ձեռք բերած լեզվական գիտելիքների ամբողջականությունը և այդ գիտելիքների գործնական կիրառությունը:

Մայրենի լեզվի ուսուցման ընդհանուր համակարգում և առանձնապես ընթերցանության բաժնում արտադասարանային աշխատանքներն իրենց ուրույն տեղն պետք է ունենան՝ որպես աշակերտների ինքնուրույնության ու ակտիվության զարգացման, նրանց մեջ ինքնագործունեության ու ստեղծագործական կարողությունների պատրաստման, նրանց կյանքի համար նախապատրաստելու կարևորագույն միջոց:

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Արտադասարանային աշխատանքները կարող են կատարվել դասարանում կամ դպրոցում' դասից դուրս և տանը՝ համաձայն դրաեց բնույթին ու հետապնդած նպատակներին, այսինքն՝ աշակերտների այդ պարապմունքները կարող են կատարվել ուսուցչի անմիջական հսկողության տակ և նրա հանձնարարությամբ: Դրանց հիմնական նպատակը մի կողմից աշակերտներին ինքնուրույն աշխատանքին նախապատրաստելն է, որը բացառիկ կարևոր նշանակություն ունի մարդու ինքնուրույնության դաստիարակման ու ինքնակրթության համար:

Տարրական դասարաններում անցկացվող արտադասարային պարապմունքներն իրենց թեմատիկայով ու բովանդակությամբ հիմնականում պետք է կապված լինեն դասարանային աշխատանքների ու ծրագրային նյութերի հետ:

Այս դեպքում է միայն, որ դրանք հատուկ արժեք կստանան, կդառնան նպատակային ու արդյունավետ, հանդես կգան որպես ուսումնական աշխատանքի բաղկացուցիչ մասերից մեկը: Արտադասարանային աշխատանքները կարող են լինել մի քանի տեսակ՝

- Աշակերտների համար կազմակերպվող գեղարվեստակսն ընթերցումներ՝ ուսուցչի կամ լավ կարդացող երեխաների կողմից:
- Ինքնուրույն աշխատանք գրքի վրա:
- Ինքնուրույն աշխատանք մանկական մամուլի՝ թերթերի ու ամսագրերի վրա:
- Երեխաների ուժերով կամ նրանց համար կազմակերպված երեկույթներ ու ցերեկույթներ, գրական-երաժշտական հանդեսներ, հանդիպումներ ականակոր մարդկանց հետ, հարց ու պատասխաններ, գրական նյութի վրա տրվող մտավոր խնդիր-առաջադրանքներ:

Դրանցից ամեն մեկն ունի իր որոշակի նպատակներն ու խնդիրները, աշխատանքի կազմակերպման իր ուրույն ձևերն ու եղանակները, որոնց մայրենիի ուսուցիչը լավ ծանոթ պետք է լինի: Այս աշխատանքներից առաջին երեքը վերաբերում են արտադասարանային ընթերցանությանը և անցկացվում են դասարանում կամ տանը, դասից դուրս կամ երբեմն էլ դասերի հաշվին՝ նպատակով նախատեսված պարապմունքների հաշվին, իսկ մյուս աշխատանքները բովանդակությամբ նույնպես սերտորեն կապված են ընթերցանության հետ, սակայն իրենց հետապնդած նպատակներով ու խնդիրներով վերաբերում են օժանդակ միջոցառումներին և նույնպես կարող են անցկացվել դասերի հաշվինև դասերից դուրս՝ ըստդրանց բնույթին:

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ

Արտադասարանային ընթերցանությունն իր ուրույն տեղն ունի դպրոցում տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների ընդհանուր համակարգում: Նրա դերն ու նշանակությունը շատ ավելի մեծ է տարրական դասարաններում, որտեղ դրվում են երեխաների հետ դպրոցում տարվող բոլոր տեսակի կրթադաստիարակչական աշխատանքների հիմքերը:

Տարրական դասարանների մայրենիի ծրագրում ըստ դասարանների

որոշակի պահանջներ են առաջադրված արտադրսարանային ընթերցանության կազմակերպման ու անցկացման վերաբերյալ, այդ նպատակով հատուկ ժամեր են հատկացված (1-ին դասարանում՝ շաբաթական 1, 2-րդ դասարանում՝ երկու շաբաթը մեկ, իսկ 3-րդ դասարանում՝ ամիսը 1 պարապմունքի հաշվով), տրված են արտադասարանային ընթերցանության պահանջները, իսկ ոչ շատ առաջ տրված էին նաև հանձնարարվող գրքերի ցանկերը:

Այս ամենից պարզ երևում է, որ արտադասարանային ընթերցանությունը համարվում է մայրենիի տարրական դասընթացի և առանձնապես նրա ընթերցանության բաժնի բաղադրիչ մասերից մեկը և այն չի կարելի երբեք ուշադրությունից դուրս թողնել: Արտադասարանային ընթերցանության աշխատանքների կազմակերպումը տարրական դասարաններում առանձնահատուկ դժվարությունների հետ է կապված, որպիսիք չկան դպրոցական ուսուցման մյուս օղակներում:

Դրանք ամենից առաջ արտահայտվում են աշակերտների մեջ դեպի գիրքը սեր արթնացնելու դաստիարակչական-հոգեբանական աշխատանքի և երեխաների մեջ կարդալու տեխնիկայի թույլ զարգացած լինելու խոչընդոտների հաղթահարման գործում:

Տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանության կազմակերպման աշխատանքներում պետք է տարբերել երեք հիմնական հարց, որոնցից ամեն մեկը արժանի է հատուկ քննության:

1. Աշխատանքի կազմակերպում : Տարրական դասարաններում անցկացվող արտադասարանային ընթերցանությունը ոչ միայն կազմակերպվում ու ղեկավարվում, այլև շատ անգամ նաև անցկացվում է ուսուցչի կողմից՝ հատկապես 1-ին դասարանում 1-ին կիսամյակում, երբ երեխաները դեռևս կարդալ չգիտեն: Այս առումով աշխատանքի կազմակերպումը հատուկ նշանակություն ու արժեք է ստանում և դրա վրա լուրջ ուշադրություն է պետք դարձնել: Արտադասարանային ընթերցանության կազմակերպման ուղղությամբ որոշակի աշխատանք պետք է տանել և՝ ընտանիքում, և դպրոցում, այդ պարտականությունը հավասարապես ընկնում է թե ծնողների և թե՝ ուսուցիչների վրա:

Այս աշխատանքի համար երեխաների նախապատրաստումն սկսվում է դեռևս

ընտանիքում՝ նախադպրոցական հասակից: Երեխաների համար գեղարվեստական գրքերի ընթերցումը ընտանիքի չափահաս անդամների պարտականությունն է, որպեսզի դեռևս դպրոց գնալուց առաջ երեխաները կապված լինեն գրականության հետ: Այդ գործում շատ մեծ է նաև մանկապարտեզի դերը, ուր ծրագրված աշխատանք է տարվում այդ ուղղությամբ:

Արտադասարանային ընթերցանության ճիշտ ու արդյունավետ կազմակերպման գործում ընտանիքներին մեծ օգնություն կարող են ցույց տալ մանկավարժական կոլեկտիվները, որոնց մանկավարժական աշխատանքի հիմնական հարցերից մեկն էլ այդ այլք է լինի: Հարկ է նկատել, սակայն, որ արտադասարանային ընթերցանության կազմակերպման ուղղությամբ հիմնական աշխատանքը, այնուամենայնիվ, մնում է դպրոցի վրա: Դեռևս ուսումնական տարվա սկզբին մայրենիի ուսուցիչը դասարանի պատին փակցնում է ընթերցանությսն համար հանձնարարվող գրքերի ցանկը, սահմանում է դրանց կարդալու հերթականությունն ու հաշվառման կարգը:

Ամբողջ ուսումնական տարվա ընթացքում ուսուցիչը պետք է հետևի և ղեկավարի աշակերտների սարտադասարանային ընթերցանությունը՝ հաճախակի ստուգումներ անցկացնելով, առաջադրանքներ ու հրահանգներ տալով: Ստուգման ձևերից խրախուսելի կարելի է համարել այսպես կոչված զննական կամ ցուցադրական ստուգումը, որպիսին կիրառում են մեր առաջավոր ուսուցիչները: Որոշ դպրոցներում փակցնում են աշակերտների ցուցակը և անունների դիմաց կարմիր մասիտով նշում կամ փոքրիկ դրոշակ են փակցնում՝ կարդացած գրքերի քանակին համապատասխան: Այլ դպրոցներում ըստ աշակերտների քանակի համապատասխան գրպանիկներ են պատրաստում և յուրաքանչյուր աշակերտի գրպանիկում դնում են կարդացած գրքերի վերաբերյալ համապատասխան քարտ, որի վրա նշված է լինում գրքի անունը, հեղինակը, ընթերցման ժամանակը: Սրանք ոչ միայն կատարած աշխատանքի հաշվառման, այլև երեխաներին խրախուսելու լավագույն ձևեր են և կարելի է լայնորեն կիրառել:

<u>2. Գրականություն:</u> Տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանության համար առաջադրվող մանկական գրականությունը պետք է աչքի ընկնի իր խիստ պարզությամբ, մատչելիությամբ, խոր

գեղարվեստականությամբ և կերպարների ու նկարագրված դեպքերի վառ գունավորումով, որպեսզի հասնի երեխաներին, նրանց մեջ անհրաժեշտ հույզեր ու ապրումներ առաջացնի, զգալ ու հոգեպես վերապրել տա այն ամենը, ինչ նկարագրված է այնտեղ: Խոսելով մանուկների ու մեծերի համար գրված գեղարվեստական գրքերի առանձնահատկությունների մասին՝ Ա. Ս. Մակարենկոն գտնում էր, որ դրանց տարբերությունը ոչ այնքան թեմատիկայի, որքան գրելաձևի մեջ: Ըստ նրա' մանկական գրականությունը խորապես գեղարվեստական պետք է լինի: Նրանում, որքան կարելի է ավելի շատ էներգիա, ծիծաղ, խոր լավատեսություն ու դիտողականություն պետք է լինի, դա լիովին համապատասխանում է աշակերտների մտածողությանն ու աշխարհըմբռնման բնույթին:[1] Այս պահանջներն ուսուցիչներն այսօր էլ կարող են չափանիշ դարձնել՝ տարրական դասարանների աշակերտների համար արտադասարանային ընթերցանության գրքեր ընտրելիս: Պետք է նաատել, որ միայն գրքերով չպետք է բավարարվել:

Դեռևս 2-րդ դասարանից սկսած կարդալու համար աշակերտներին պետք է առաջադրել նաև մանկական թերթեր ու ամսագրեր, որովհետև մենք աշակերտներին պետք է սովորեցնենք աշխատել ոչ միայն գրքերի, այլև մամուլի վրա, որը երեխաների ընթերցանության համար անսպառ ու հետաքրքրական նյութ կարող է մատակարարել: Թերթերի ու ամսագրերի վրա տարվող աշխատանքն իր բնույթով ու ձևերով նույնն է, ինչ որ գրքի վրա տարվող աշխատանքը, հետևաբար ստորև ասվածը հավասարապես վերաբերվում է երկուսին էլ:

Տարրական դասարաններում անցկացվող արտադասարանային ընթերցանության համար կարելի է ընտրել հայ, ռուս, արտասահմանյան հեղինակների մանկական ստեղծագործությունների նմուշները:

Ընտրության համար, բացի վերևում նշվածից հիմնական չափանիշ կարող է լինել երեխաների ըմբռնման մակարդակն ու հետաքրքրությունների շրջանակը, ինչպես նաև այդ դասարանում տարվող կրթադաստիարակչական ընդհանուր

[1] А. С. Макаренко, О коммунистическом воспитания, М., 1956, стр 507-507

խնդիրների հետ տվյալ գրքում արծարծված թեմայի համապատասխանությունը:

Թեմատիկայի տեսակետից տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանության համար հանձնարարելի գրքերը հիմնականում կարող են լինել 4 տեսակ՝

- դաստիարակչական,
- կենցաղային,
- ճանաչողական,
- գեղագիտական բնույթի:

Իհարկե, շատ հաճախ դժվար է լինում որոշել, թե ընտրված գրքույկը հիշած թեմաներից որին է համապատասխանում, սակայն երբեք էլ պարտադիր չէ բացարձակ համապատասխանություն որոնել այնտեղ, որտեղ այն չկա կամ դժվար է գտնել, այնքանն էլ բավական է, եթե ուսուցչի համար սարզ է, թե այդ գրքույկի ընթերցումն ինչ նպատակ է հետապնդում:

Առաջավոր ուսուցիչներից շատերը չեն բավարարում երեխանե ին հանձնարարվող գրքերի ցանկը տալը, հաճախ իրենց և աշակերտների ուժերով ստեղծում են պահանջված գրքերի դասարանական գրադարան և այն դնում երեխաների տրամադրության տակ՝ դրանով իսկ ապահովվելով բոլոր գրքերի ընթերցումը բոլոր աշակերտների կողմից:

<u>3. Պարապմունքի ձևերը:</u> Արտադասարանային ընթերցանության կազմակերպման համար կարևոր նշանակություն ունի նաև պարապմունքի ձևի որոշումը, որը կապված է ոչ միայն դասարանից, այլև ընթերցվող նյութից:

Առաջին դասարանում տրվող արտադասարանային ընթերցանությունն իր առանձնահատկություններով տարբերվում է մյուս դասարաններում տարվող նման աշխատանքից, քանի որ այստեղ աշակերտները դեռևս ինքնուրույն ընթերցել չգիտեն և այն ըստ էության հիմնականում կատարվում է ուսուցչի կողմից՝ մանավանդ առաջին կիսամյակում:

Այդ աշխատանքը փաստորեն կատարվում է ոչ թե դասից դուրս, այլ դասի ընթացքում, ուստի որոշ առումով այն ոչ թե «արտադասարանային» ընթերցանություն է այլ' «դասարանային», և նրա արտադասարանային անունը միայն պայմանական է:

Հետևաբար, այն սկզբունքներն ու աշխատանքի ձևերը, որ մեթոդական գրականության մեջ մշակվել է ընդհանրապես արտադասարանային ընթերցանության վերաբերյալ, նույնությամբ հնարավոր չէ կիրառել 1-ին կիսամյակի ընթացքում աշխատանքի թե կազմակերպմա դասարանում:

Ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում աշխատանքի, թե կազմակերպման ու ղեկավարման, և թե' բուն անցկացման ամբողջ ծանրությունն ընկնում է մայրենիի ուսուցչի վրա, իսկ երկրորդ կիսամյակից սկսած դրությունը զգալիորեն փոխվում է, որովհետև երեխաները գրաճանաչ են դառնում, և արդեն հնարավորություն է ստեղծվում աշխատանքի մի մասը թողնել աշակերտներին:

Սա թե՝ ուսուցչի աշխատանքը թեթևացնելու և թե՝ արտադասարանային ընթերցանությունը հետաքրքրական ու բազմազան դարձնելու տեսակետից զգալի նորություն է մտցնում աշխատանքի մեջ:

Առհասարակ տարրական դպրոցներում սրտադասարանային ընթերցանության պարապմունքները հիմնականում կարող են լինել 4 տեսակ, դրանցից ամեն մեկն ունի իր հիմնական նպատակներն ու խնդիրները և դրանցով պայմանավորված նաև աշխատանքի կազմակերպման ուրույն ձևերը:

Պարապմունքն անցկացնելուց առաջ պարզել նրա տեսակը, այդ նշանակում է պարզել նաև նրա կազմակերպման ու անցկացմսն եղանակը:

<u>1. Պարապմունքներ,</u> որոնց նպատակը դաստիարակչական ու ճանաչողական կոնկրետ փաստերի հաղորդումը կամ այլ կերպ ասած՝ փաստական նյութի կուտակումն է: Այս տիպի պարապմունքները կարող են կատարվել և դասարանում՝ դասից դուրս կամ նախատեսված պարապմունքի հաշվին՝ ուսուցչի կողմից կատարված ընթերցման միջոցով:

<u>2. Պարապմունքներ,</u> որոնց նպատակը ժողովրդական տոների մասին անհրաժեշտ տեղեկությունների հաղորդումը և սովորողների մեջ տոնական տրամադրության ստեղծումն է: Այս պարապմունքների զգալի մասը կարելի է անցկացնել ցերեկույթների, գրական-երաժշտական հանդեսների ու աշխատանքի առաջավորների կամ պատմական կարևոր իրադարձություններին մասնակցած մարդկանց հետ կազմակերպված հանդիպումների ձևով:

<u>3. Պարապմունքներ,</u> որոնց նպատակը կուտակված փաստական նյութի

ընդհանրացումն է, այդ ընդհանրացման շնորհիվ հանվող եզրակացությունը:

4. Պարապմունքներ, որոնց նպատակը անցկացված արտադասարանային ընթերցումների արդյունքների ստուգումն է, որը շատ կարևոր է ինչպես աշխատանքի արդյունավետությունն ու նպատակայնությունը ստուգելու, այնպես էլ հետագա աշխատանքների կազմակերպման տեսակետից: Տարրական դասարաններում տարվող արտադասարանային ընթերցանության պարապմունքների մի զգալի մասը կարելի է անցկացնել հետևյալ պլանով.

ա)նախապատրաստական զրույց,

բ)ընթերցում,

գ)զրույց ընթերցածի շուրջ

դ) բովանդակության վերարտադրում:

Ընթերցած բնագրի բովանդակության վերարտադրումով աշխատանքը տվյալ նյութի վրա հիմնականում կարել է ավարտված համարել, սակայն առանձին դեպքերում, ըստ դասարանի, հարկ է լինում աշխատանք տանել նաև հեղինակի մասի տեղեկություններ տալու, բնացրում եղած բառերը երեխաների սեփականությունը դարձնելու և այլ ուղղությամբ:

Այս ձևով կարելի է անցկացնել արտադասարանային ընթերցանության այն բոլոր պարապմունքները, որոնց նպատակը փաստական նյութի կուտալումն է և ժողովրդական տոների վերաբերյալ տեղեկությունների հաղորդումը, այսինքն' երբ նոր գրքույկներ պետք է կարդալ երեխաների համար:

Պարապմունքի այս ձևը հիմնականում գործադրելի է 1-ին դասարանում, սակայն առանձին դեպքերում պարապմունքներն այս ձևով կարելի է անցկացնել նաև մյուս դասարաններում: Դա թե աշխատանքի մեջ բազմազանություն մտցնելու և թե' երբեմն աշակերտներին լավ կարդալու, կարդացածը ճիշտ վերլուծելու ու հասկանալու օրինակ տալու տեսակետից շատ օգտակար է:

Տարրական դասարաններում գործադրելի է արտադասարանային ընթերցանության պարապմունքի նսև մի այլ ձև, որի ժամանակ ստուգվում է ուսուցչի կամ աշակերտների կողմից կարդացված նյութերի յուրացումը, և կամ ամփոփվում ու ընդհանրացվում են միննույն թեմային վերբերող մեկ կամ մի քանի գրքույկներից երեխաների ստացած տպավորությունները:

Արտադասարանային ընթերցանության այս տիպի պարապմունքն ունի մոտավորապես հետևյալ կառուցվածքը՝

ա) նախապատրաստական զրույց,

բ)վերարտադրում,

գ) գրական խաղեր,

դ)ամփոփում:

Այս ձևով կարելի է անցկացնել բոլոր այն պարապմունքները, որոնց նպատակը ոչ թե նոր նյութի հաղորդումն է, այլ արդեն հաղորդված կամ երեխաների կողմից ինքնուրույն կերպով կարդացած նյութերի շուրջ տարվող տրամաբանական աշխատանքը: Երբեմն այդ ընդհանրացնող կամ ամփոփիչ պարապմունքների նպատակը կարող է լինել այս կամ այն հեղինակի մասին երեխաներին ծանոթություն տալը: Նման պարապմունքները հանձնարարելի կարելի է համարել 2-րդ և 3-րդ դասարաններում է նվիրված Հ.Թումանյանին, Ղ. Աղայանին, Ա. Խնկոյանին, Ա. Պուշկինին և այլ անվանի գրողների:

Տարրական դասարաններում անցկացվող արտադասարանային ընթորցանության պարապմունքների ձևերից մեկն էլ այդ ուղղությամբ կարող է բաղկացած լինել 3 բաղադրամասերից՝

ա)նախապատրաստան զրույց,

բ)զրուցում և

գ)ամփոփում:

Համառոտակի սրանք են տարրական դասարաններում անցկացվող արտասարանային ընթերցանության պարապմունքների այն հիմնական ձևերը, որոնք արժանի են ուշադրության: Իհարկե դպրոցներում կարող են գործադրվել պարապմունքի այլ ձևեր, դա չի բացառված և այդ ուղղությամվ որևէ սահմանափակում լինել չի կարող, որոնող ու ստեղծագործող ուսուցիչները միշտ էլ կարող են ուսումնական աշխատանքի կատարելագործման նորանոր ձևեր առաջադրել:

ՑԵՐԵԿՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԱՆԴԵՍՆԵՐ

Զանազան տիպի ցերեկույթները, գրական-երաժշտական հանդեսները, տրամախոսությունները կամ հարց ու պատասխանները, գրական

վիկտորինաներն ու գեղարվեստական ընթերցումներն իրենց բնույթով հիմնականում օժանդակ միջոցառումներ են:

Դրանք նպաստում են երեխաների պատկերացումների ու ճանաչողության շրջանակի ընդարձակմանը, լիարժեք դաստիարակությունը և գեղագիտական ճաշակի ձևավորմանը:

Ցերեկույթներ ու գրական-երաժշտական հանդեսներ կարելի է կազմակերպել ինչպես ժողովրդական տոների, ուսումնական տարվա ավարտի, այբբենարանը ավարտելու, անվանի մարդկանց հետ հանդիպելու, այնպես էլ առանձին մանկական գրողների մասին երեխաներին համեմատաբար ավելի լայն ծանոթություն տալու կամ նրանց մեջ տոնական տրամադրություն ստեղծելու նպատակով:

Դրա համար երեխաներին պետք է հանգամանորեն նախապատրաստել, որպեսզի նրանով կարողանան հանդես գալ երգերի կատարումով, անհատական ու խմբային արտասանություններով, երաժշտական համարներով, փոքրիկ հաղորդումներով, անցած հեքիաթների ու առակների թատերականացված դերակատարումներով, պարերով և այլն:

Արտադասարանային առանձին պարապմունքներ կարելի է անցկացնել տրամախոսությունների կամ հարց ու պատասխանների ձևով, որի ընթացքում երեխաները հարցարկղից հանում են պարապմունքի թեմային վերաբերող հարցաքարտերը և հենց տեղն ու տեղը կամ իր հարցի հերթական համարի տեղում պատասխանում դրան՝ նայած խաղի համար սահմանված կանոններին:

Դա պարապմունքին խաղի բնույթ է տալիս, որը հետաքրքրում ու աշխուժացնում է երեխաներին, բայց և ուսուցիչն էլ հնարավորություն է ունենում ստուգելու կարդացած գրքի համ ամսագրի նյութի յուրացումը կամ հանձնարարության կատարումը:

Երբեմն էլ այդ հարցերը կարող են աշակերտներն իրենք տալ:

Երեխաների կարդացած գրքերին, մամուլի նյութերին, դիտած կինոնկարներին ու դիաֆիլմերին նվիրված որոշ պարապմունքներ էլ կարելի է անցկացնել գրական վիկտորինաների կամ հանելուկների ձևով, որը ոչ միայն աշխատանքի մեջ հետաքրքրություն ու աշխուժություն է մտցնում, այլև մեծապես

նպաստում է երեխաների տրամաբանական մտածողության զարգացմանը:

Դրա համար ուսուցիչը պետք է պատրաստի հատուկ քարտեր՝ գրքի հերոսների, առանձին հոդվածների կամ գրողի տարբեր ստեղծագործություններից վերցրած ու քառատողերի, երկխոսությունների, նկարագրությունների դիպուկ արտահայտությունների գրառումներով, որոնք դրվում են սեղանին կամ բաժանվում աշակերտներին:

Յուրաքանչյուր աշակերտ իր ստացած քարտը ուսումնասիրելուց հետո աշխատում է լուծել այն, եթե չի կարողանում, նրան օգնում են ընկերները: Յուրաքանչյուր պատասխան գնահատվում է դասարանի կողմից, եթե անհրաժեշտ է լինում այդ պատասխանի մեջ որոշ լրացումներ ու շտկումներ են մտցվում:

Առանձին դեպքերում ուսուցիչը աշակերտների համար կարող է կազմակերպել հատուկ գեղարվեստական ընթերցումների պարապմունքներ, որպեսզի նրանց մեջ գեղեցիկ խոսքի ճաշակ մշակի սովորեցնի զգալ մայրենիի բարեհնչյունությունը, հարստությունն ու արտահայտչական հնարավորությունները, հմայքն ու երաժշտականությունը: Այդ պարապմունքների ժամանակ ընտրված բնագիրը կարող է կարդալ ինքը' ուսուցիչը, կարող է կարդալ տալ նաև շատ լավ կարդացող առանձին աշակերտների, իսկ ամենից հաճախ կարող է աշակերտներին լսել տալ նշանավոր արտիստների ու աստունքողների խոսքի ձայնագրությունները, որոնք երեխաների համար գեղեցիկ խոսքի ու արտահայտիչ ընթերցանության օրինակ կարող են լինել

(Իմ կողմից կազմակերպած ցերեկույթ-հանդեսի պլանը նվիրված <<Այբբենարանի>> ավարտին, նայել հավելված 1-ում:) Համառոտակի սրանք են ընթերցանության դասերի հետ կապված այն ձևերը, որոնք տարրական արտադասարանային պարապմունքների դասարաններում հանձնարարելի են ընդհանուր գործադրման համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով՝ *«Արտադասարանային աշխատանքների կազմակերպումը տարրական դասարաններում: Նրանց դերն ու նշանակությունը սեփական փորձից» հետազոտական աշխատանքը, հանգել եմ հետևյալ եզրակացությունների՝*

- Առաջավոր մանկավարժները չպետք է սահմանափակվեն միայն անցած թեմաների շուրջ արտադասարանային աշխատանքներ հանձնարարելով, այլ հաշվի առնելով սովորողի տարիքային ու անհատական առանձնահատկությունները' յուրաքանչյուր աշակերտի տալ առանձին, չկրկնվող առաջադրանքներ: Սա հնարավորություն կտա բացահայտել յուրաքանչյուր սովորողի ստեղծագործական ներուժը. ինչպես նաև կբարձրացնի ինքնուրույնությունը:
- Արտադասարանային աշխատանքները չպետք է սահմանափակվեն միայն ընթերցանության, ցերեկույթների, միջոցառումների շրջանակներում, այլ դրանք պետք է ընդգրկեն ճանաչողական էքսկուրսիաներ, աշխատանք բնության հետ, կենդանիների հետ: Սրանք առավել շատ կնպաստեն սովորողների էկոլոգիական դաստիարակությանը, բնապահպանությանը, ինչպես նաև բազմակողմանի և համապարփակ գիտելիքների ձեռբերմանն ու ամրապնդմանը:
- Արտադասարանային աշխատանքները մշտապես պետք է լինեն ուսուցիչների, դպրոցի դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի, տնօրենի և այլ պատասխանատու մասնագետների(սոցիալական մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող) ուշադրության կենտրոնում և վերահսկողության տակ, իհարկե' չսահմանափակելով սովորողի ազատությունն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Արտադասարանային աշխատանքների կազմակերպումը բավականիան կարևոր և պատասխանատու գործ է, ուստի այն չպետք է անուշադրության մատնել, չկարևորել և չիրականացնել:

Մշտապես պետք է հիշել, որ դրանք առաջին հերթին անհրաժեշտ են սովորողներին սեփական « Ես»-ը գտնելու, արժևորելու և կատարելագործելու համար;

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Ղարիբյան և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1955:

2. Ա. Տեր-Գրիգորյան, Ընթերցանության մեթոդիկա, Երևան 1978:

3. Н. С. Рождественский, В.А. Кустарева, Методика внекласного чтения, М., 1965

4. А. С. Макаренко, О коммунистическом воспитания, М., 1956

Հավելված 1 /Հատված իմ պլանավորած այբբենարանի հանդեսից/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Մեսրոպաշունչ հայոց տառեր,

2.Ասմունք,

3.Երգ՝ «Դպրոց եմ գնում»,

4.Երգ՝«Իմ օրը»,

5.Ասմունք,

6.Երգ՝ «Մաշտոցյան տառեր»,

7.Խոսե՛ք հայոց տառեր,

8.Երգ՝ «Հնչյուն-տառ»,

9.Ո՞վ է Մեսրոպ Մաշտոցը,

10.Երգ՝ «Մամա»,

11.Խոսք՝ Կարինե Սաղաթելյան ՝«Մեր լեզուն»,

12.Երգ՝«Մայրենի լեզու»,

13.Երդում,

14.Հայաստան,

15.Երգ՝ «Հայաստան»,

16.Պար՝«Շարան»,

17.Շնորհակության խոսք,

18.Երգ՝ «Փոքրերի աշխարհ»

Թադևոսյան Էլեն

Այսօր ելա ու մեր տանից,
Վերցրի մի քիչ խաղաղություն,
Վերցրի ժպիտ ու բարություն,
Եվ թև առած եկա դպրոց:
Բերե՛մ,լցնեմ սրտերը Ձեր,
Եվ աշխարհի ճամփի վրա,
Կանա՛չ-կանա՛չ արև կախեմ...

Երգ՝ «Իմ օրը»

1

Ես քո տարիքում շատ եմ սովորել կյանքում,
Միշտ լսում ենք մենք մեծերից,
Քո դասերը միշտ կարևոր են ամենից,
Ա՛խ, հոգնել եմ այս խոսքերից:
Ճիշտ է, միշտ էլ պետք է սովորել, բայց...

(ԿՐԿՆԵՐԳ)

Ընկերներ, խաղեր, երգեր ու ուրախ պարեր,
Ո՞նց ես հասցնեմ դեռ դպրոցի դասեր:
Ընկերներ, խաղեր, երգեր ու համակարգիչ,
Հասկացի՛ր, ների՛ր ինձ լավ իմ ուսուցիչ:

2

Հեռախոսը իմ՝ անհամբեր սպասող զանգին՝
Ե՞րբ են կանչելու խաղալու:
Պար, հետո նկար, լող,հետո երգից մի տող,
Միշտ զբաղված եմ այս գործերով:
Ճիշտ է, միշտ էլ պետք է սովորել, բայց...

(ԿՐԿՆԵՐԳ)

Ընկերներ, խաղեր, երգեր ու ուրախ պարեր,
Ո՞նց ես հասցնեմ դե դպրոցի դասեր:

Ընկերներ, խաղեր, երգեր ու համակարգիչ,

2

Հասկացի՛ր, ների՛ր ինձ լավ իմ ուսուցիչ:(2x)

Շահինյան Սամվել
Բարև Ձեզ սիրելի՛ ուսուցիչներ, հյուրեր, ծնողներ:

Աբրահամյան Սաշա
Մենք եկել ենք այս մեծ և լուսավոր տունը, որը կոչվում է դպրոց:

Սարգսյան Կարինե
Այժմ մենք դարձել ենք այս դպրոցական տան անդամը, որը կրում է գնդապետ Վլադիմիր Կարապետյանի անունը:

Գյուրջյան Կարեն
Բոլորն ուզում են մեզ հետ ծանոթանալ, բայց ինչպե՞ս դա անել:

Թադևոսյան Էլեն
Ես գիտեմ երեխաներ այժմ կհաշվեմ մինչև երեքը, և ձեզանից յուրաքանչյուրը կասի իր անունը:

1. Սաշա
2. Արտյոմ
3. Սամվել
4. Ալլա
5. Սյուզան
6. Արմեն
7. Լևոն
8. Սամուել
9. Վահագն
10. Կարեն
11. Անգելինա
12. Ռոման
13. Էլեն